

Հայ գրականության մարզային փուլ - 2022 թ.

Հարցաշարեր - 9-րդ դասարան - տևողությունը՝ **150** րոպե

Միայն հաղթանակ, սիրելի՛ մասնակից:

1. Ի՞նչ գիտես հայոց հին դիցարանի մասին: Կենսունա՞կ են այսօր այդ աստվածները: Զրուցի՛ր Տիր աստծո հետ:

5 մ.

2. Ո՞վ է Կորյունը: Ո՞րն է նրա մատյանը. ի՞նչ առանձնահատուկ տեղ է հատկացվում այդ մատյանին և ինչո՞ւ: Բացի մատյանի՝ մեզ հայտնի վերնագրից ուրիշ ի՞նչ վերնագիր ունի այդ մատյանը(գրել ամբողջական անվանումը):

5 մ.

3.«Եվ մինչդեռ ես իմ մտքի մեջ մենակ հոգում էի իրողությունները հիշելու, ահա եկավ, հասավ ինձ Հովսեփ կոչված մի պատվական մարդու հրամանը ...»: Ու՞մ խոսքերն են, ո՞վ էր այդ Հովսեփը. ի՞նչ առնչություն ունի ասվածի հետ:

5 մ.

4.Նահապետ Քուչակի հայրենների թեմատիկան: Վերլուծի՛ր քո իմացած երեք հայրեն՝ նշելով թեմատիկան:

Գրի՛ր երկու ասույթ Քուչակի մասին:

5 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

Ս. Աբազյան